

[Ը]

1 Եւ նորա¹ իւրովք հաւասարաւք զսովորականն առաջի եղեալ զաղաւթս եւ զտքնութիւնս եւ զպաղատանս արտասուալից², զխստամբերութիւնս³, զհոգս զաշխարհահեծս⁴, յիշելով զասացեալսն մարգարէին⁵, եթէ՝ *Յորժամ հեծեծեսցես, յայնժամ⁶ կեցցես*^ա:

2 Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ⁷ աւճան գտանելոյ: 3 Որում⁸ պարգեւեր իսկ վիճակ յամենաշնորհողէն⁹ Աստուծոյ. հայրական չափուն ծնեալ ծնունդս¹⁰ նորոգ եւ սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս¹¹ հայերէն լեզուին: 4 Եւ անդ¹² վաղվաղակի նշանակեալ, անուանեալ եւ կարգեալ¹³, յաւրիներ սիղոբայիւք կապաւք¹⁴:

5 Եւ ապա հրաժարեալ¹⁵ յեպիսկոպոսէն սրբոյ, հանդերձ աւգնակաւսաւք¹⁶ իւրովք իջաներ ի քաղաքն Սամոսատացոց, յորում¹⁷ մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն եւ յեկեղեցւոյն մեծարեալ լիներ:

6 Եւ անդէն ի նմին¹⁸ քաղաքի գրիչ ոմն¹⁹ հելլենական²⁰ դպրութեան²¹ Զոնփանոս անուն գտեալ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրացն²² զնրբագոյնն եւ զլայնագոյնն, զկարճն եւ զերկայնն, զառանձինն եւ զկրկնա-

1 *b ջնջ.* եւ նորա / *e ճա ճր* եւ նա

2 *ճա ճր* եղեալ զպահս եւ զաղօթս եւ զտքնութիւն զպաղատանս արտասուալիցս / *b* արտասուալիցս

3 *c* զխստամբերութիւնսն եւ

4 *d ճա ճր* աշխարհահեծս

5 *ճա ճր* Մարգարէն թէ

6 *ճա ճր* ապա *իիս.* յայնժամ

^ա Եւ. Լ 15

7 *ճա ճր չիք* ինչ

8 *ճա ճր* որում եւ

9 *ճա ճր* յամենաշնորհն

10 *ճա ճր* չափոյ ծնանիլ ծնունդ

11 *d* նշանագիր

12 *ճա ճր* եւ անդէն

13 *ճա ճր* նշանագրեալ անուանագրեալ եւ կարգեալ

14 *ճա ճր* Սիղոբայիւք յորիներ. եւ կապաւք եւ ձայնատուր նշանագրաւք / *d* կապիւք / *բուրորդ* եւ լկապօթ] *յապաւ.* եւ

15 *e* եւ հրաժարեալ ապա / *ճա ճր* հրաժարեալք

16 *bed* օգնականօթն / *ճա ճր* ազգականօթ

17 *ճա ճր* յորում եւ

18 *ճա ճր* անդ ի նմին

19 *b ճա ճր* զոմն

20 ճա հելլենական / ճր հելլ'ենական

21 ճր դպրութիւնն / *եվ* դպրութեամբ

22 *ճա ճր* նշանագրացն / *միսն.* նշանագրոյն